

Տարեկան դրոշմ է 10 ռուբլի: Վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը՝ 1 ռ.: Առանձին համարներով խրատակները 5 կոպեկ:



Խմբագրության ուղղած թէ՛ յօդուածները եւ թէ՛ նամակները պէտք է պարզ դրուած լինին պրոպի ստորագրութեամբ եւ հասցեով: Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները: Խմբագրութիւնը իւր վերայ չէ ստնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցարանանջ:

Յայտարարութիւնները համար վճարում են ամեն մի րատին 2 կոպ. Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով: Յայտարարութիւնները ընդունվում են խմբագրատանը, Վրդիկա՛ս հիւրանոցի տակ պ. Տէր-Յովակիմեանի ծխախոտի խանութում եւ պ. Գամբրելեանի պալիսիոնում:

ԱՌՆԱԳԻՍՏ 1885 ԹՈՒԱՎԱՆԻՆ

„ՄԵՂՈՒ ՀՈՅՍՍԱՆԻ“

ԳՍԱՆ ԵՒ ԵՌՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԱՌՆԱԳԻՍՏ

Կը հրատարակի ինչն զիւրքով եւ ծրագրով:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ:

I) Պետական կարգադրութիւնը. — II) Առաջնորդներ անօրեայ ամենատեսակ խնդիրներին մասին. — III) Երբեք տեսութիւն. — Տեղական և հասարակական խնդիրները վերաբերութեամբ յօդուածներ և թղթակցութիւնք. — IV) Քաղաքական վիճակի վերայ յօդուածներ և լուրեր. — V) Մանր լուրեր. — VI) Խառն լուրեր. — VII) Բանասիրական. — Ֆելիետոններ, Պատկերներ, Վեպեր, Մտանախոսութիւնք, Քննադատութիւնք, Գիտութեանց և արհեստից վերաբերեալ յօդուածներ. — VIII) Պատասխանիք. — IX) Յայտարարութիւններ զանազան լեզուներով:

Տարեկան բաժանորդագրին է 10 ռուբլի կիսամեայ 5 ռուբլի:

Փոստի և արան հասցեն. — Ծախքը խմբագրութեան վերայ է:

Ստորագրվել կարելի է Թիֆլիսում: I) Խմբագրատանը. — II) պ. Բ. Ծահվերդովի գործակալութիւնում. — III) Չ. Գրիգորեանի գրատնտեսութեամբ. — IV) պ. Յ. Ծահլիսեանցի խանութում:

Երևանում, Առաջիկայ տարին «Մեղուն» կը հրատարակվի երեք կամ երեք անգամ, եթէ հիւսիսային միջոցները կը ներեն:

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1885 годъ

на ежедневную литературно-политическую газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

ИЗДАВАЕМУЮ ВЪ ТИФЛИСѢ

(II годъ изданія)

ПРОГРАММА газеты общаа всемъ литературно-политическимъ ежедневнымъ изданіямъ, съ возможно широкимъ развитіемъ мѣстнаго отдѣла.

Подписная цѣна съ доставкою и пересылкою въ Россію: на годъ 10 руб.; на 6 мѣс. — 6 р.; на 3 мѣс. — 3 р. 50 к.; на 1 мѣс. — 1 р. 50 к.

Подписка принимается: въ Тифлисѣ въ конторѣ редакціи при Газетномъ Агентствѣ В. ШАВЕРДОВА, въ С.-Петербургѣ въ вѣнчюмъ магазинѣ „Новога Времени“. Иногородные адресуютъ свои требованія въ ТИФЛИСЪ, въ контору редакціи „Новаго Обозрѣнія“, при газетномъ Агентствѣ В. Шавердова.

Редакторъ-издатель А. В. Степановъ.

(10—3)

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ:

Կաթողիկոսական խնդիր. — Ղարազաղի հայոց կրօն թշուառութեան անթիւ. — Բարաջան Մասաէի կտակի մասին. — «Եր-Գարի» Ս. Պետերբուրգի թղթակցութեան առթիւ: Երբեքին Տեսութիւն. — Թղթակցութիւններ Գաւրեթից և Ախալցխայից: Քաղաքական. — Քաղաքական լուրեր: Մանր լուրեր: Յայտարարութիւններ: Բանասիրական. — Վիճակ:

Թիֆլիս, 18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1884 թ.

I

Արբանյան Սինոն արդէն շրջաբերականներ ուղարկել է վիճակներն կաթողիկոսական ընտրութեան մասին, որ տեղի պիտի ունենայ առաջիկայ 1885 թ. ապրիլի 19-ին: Երանի թէ այդ օրն ամենայն համեստութեամբ և արդարութեամբ վերանար Ղաւսաւորն զահի սգաւորութիւնը արժանաւոր զահակը ընտրութեամբ: Տարակից չէ կայ որ այս ցանկութիւնը սիրելի է ամեն ճշմարիտ հա-

յն և կեղեցասէր հայի որ եկեղեցու վերայ նայում է իրեն մի ճշմարիտ մեծ բարոյական հաստատութեան վերայ և ոչ թէ առանց հողով սրտով և համոզմամբ նրան պատկանելու: Նրան քաղաքական մի հաստատութիւն է համարուել և կեղեցու հողուն խորթ նպատակների համար: Իր այս հարցի մէջ մտնուել մեծ դեր կարող է խաղալ ժողովրդեան մէջ եռանդ և անկեղծ ձգտումն յարուցանելու, որ զիտակցարար վերաբերվէր այդ նորա համար ամենամեծ բարոյական խընդրի որոշման նպատակուն. — անժխտել է: Եւրեմն ցանկալի է, որ մասնուլն ինքն էլ առանց յախշաւորութեան, ամենայն զգուշութեամբ մերձենար հարցին, թող չը տար ամեն խակ) գրականութեան և ազգային այդպիսի ծանր խնդիրներում բաշխուողուի դեր կատարողներին հանդէս գալ այլ և եթէ գտանվէին այդպիսի յանդուգներ, զպէր օրանց ընդ շնորհ ու ժողով, որպէս զի ժողովուրդը չը շեղվէր ուղիղ և ծանր

ու խոհեմ ճանապարհից: Կան այնպիսի ծանր հարցեր, որոնց մասին խօսելն ամեն մարդու գործ է. բայց հարցը հասկանալից հարկաւոր է հմուտ լինել շատ հանգամանքների և իրողութեանց: որոնց մէջ և որոնց պահանջի համեմատ խնդրը պիտի որոշվի. նա անկախ ամեն շրջապատող հանգամանքից չէ կարող վճիռ ստանալ. այսպիսի հարցերին էր և մեր կաթողիկոսական ընտրութեան խնդիրն, որոյ հետ սերտութեամբ կապուած են այնպիսի ծանր հանգամանքներ և խնդիրներ, որոնք անհարին է զանցառութեան տալ հայ կաթողիկոսի ընտրութեան միջոցին: Պէտք է անել այն ինչ որ հնարաւոր է անհարինին ձեռնամուկ լինել իւր ոյժից բարձր ձգտել և այսպէս ոչ ոչ միայն հարցը չէ կարող յաջող և արդիւնաւոր վճիռ ստանալ, այլ և կարող է նորա որոշումն վտանգել և թարկվել: Հարկաւոր է այնպէս ամեն կողմէն որ նա չը շօշափէ այն հանգամանքներն որոնց զիմադրելու ոչ հարկ և ոչ էլ կարողութիւն կայ: Սրինակի համար յիշենք այն հանգամանքն երբ հանդուցեալ Ներսէս Պարթաբքը մի քանի տարի առաջ, տեսնելով որ անկարող է ազգի յոյսերն իրագործել Բ. Կրան անուշաղիւր լինելով նորա բողոքներին և ազգայններին հրաժարական տուելոյ որ և Կ. Պոլսոյ ազգային ժողովն ընդունելոյ բայց վեհապատուութեամբ չը ընդունել Ս. Պարթաբքի հրաժարականն և յայտնելով թէ քանի որ Ներսէս կենդանի է, պէտք է պատրիարք մնայ այլ պատրիարք նա չէ ձանաղում:

Իրաւ է սահմանադրութեամբ պատրիարքի հրաժարականն ընդունելու և նոր պատրիարքի ընտրութեան իրաւունքն ազգային ժողովին է: Բայց ինչ կարող էր անել այդ ժողովը քանի որ սուլթանի կամք կար մէջտեղում որ օրինաց աղբիւրն է երկրի համար:

Պարզ է որ ազգային ժողովը պիտի մտածէր որ այդ հանգամանքը չէ շօշափում ոչ և կեղեցուց իրաւունքներն և ոչ էլ նորա կանոններն ու վարդապետութիւնն. ուստի և պիտի խոհեմութեամբ ձանաղէր Ս. Ներսէսի Պատրիարքութեան շարունակութիւնը: Համոզված լինելով որ վեհապատու սուլթանն իւր այդ կարգադրութեամբ թէ՛ Ս. Ներսէսի անձնաւորութիւնը յարգել է կամեցել և թէ՛ իւր պետական շահերին յարմար է տեսել նորա իւր բարձր պաշտօնի մէջ մնալը: Սեր տաճկահայ կղերքը հնազանդեցան մի հանգամանքի, սրոյ զիմադրելն աւելի վնասակար կարող էր լինել և նորա)

յիշելով ժամանակիս յարմար Summum jus—Summa injuria, լատինական նախադասութիւնը, յարմար վեցան խոհեմութեան պահանջին և այսօր նոքա կատարելապէս կարող են և արժանի վայելելու իրանց իրաւունքը պատրիարքական ընտրութեան վերաբերութեամբ, համաձայն իրանց սահմանադրութեան:

Այսպիսի ազգային ծանր խնդիրներ մենք բաւական ունինք, որոնք անկարողն է վճիռ ստանալ չեն կարող քանի որ նոքա կապուած են այնպիսի հանգամանքների հետ, որոնք զանցառութեան տալ անհարին է: Երբ չհասնէ այդպէս պիտի շօշափվէին այլոց շահերն ու իրաւունքները: Բայց սոքա անբռնաբարել են. ուստի այսպիսի հանգամանքներում խոհեմութիւնը մեղ ստոււ է որ երկու կողմի շահերն էլ չը վնասող մի ելք պէտք է գտնել: Քի՞ չէ պատահում պետութեանց և ազգերի մէջ այնպիսի խնդիր որ երկուսի կամ շատերի շահերն է շօշափում և այդպիսի դէպքում աշխատ են լինում խոհեմութեամբ մի միջին ճանապարհ համաձայնութեան գտնել որով և գործն էլ վճիռ է ստանում ընդհանուր շահերի համեմատ: Մենք էլ պէտք է գտնենք ելք մեր զիջողութեամբ. մասնաւոր երբ չեն շօշափում եկեղեցուց ոչ իրաւունքներն և ոչ էլ շահերը:

«Մեղուն» ներկայ համարում հըրատարակում ենք մեր թղթակցի գրութիւնն, որ վերաբերում է արդէն հեռագրով և թղթակցութիւններով յայտնված թշուառութեան, որ հասած է Արարատականի Ղարազաղ գաւառակի 9 հայ զիւղերին, չեղեպեան խաների ուժադործութեամբ:

Մեր թղթակցին աւելի լուսաբանում է ինչպիսի ցոյց տալով այդ ուժադործութեան պատճառն ու թեւադրողը:

Ուժադործութեան նկարագրը որ կարող են կարգաւ ընթերցողք թըրթակցութեան մէջ, յիշենում է բարբարոսութեան շատ հին դարերը և նա աւելի սարսափելի երևում է նորա համար, որ կատարվում է ներկայ դարում, այն ժամանակի երբ Պարսկաստանը շնորհիւ իւր վեհապատու և եւրոպական բարեկարգութեան զիմոզ Դահլին օրից օր աշխատում է քաղաքակրթութեան հետեւել և եւրոպայի հետ սերտ յարաբերութիւն ունենալ: Բայց այս վիճակին հասնելու համար ամենհնարաւոր պայմանն է սկսահանութեան և կենսաբի ապահովութիւնը: Պարսից կառավարութիւնն

անշուշտ այս ճշմարտութիւնը հասկանում է, ուստի և նկարագրած ուժադործութիւնը պէտք է յարուցանէ նորա զայրոյթը ուժադործների դէմ և սոքա օրինակելի կերպով պատժվին որպէս զի նոյն շարագործութիւնը չը կրթնվին ժողովուրդը համոզվին որ իրանց ապահովութեան համար կայ մի զօրեղ հսկող և պաշտպան ձեռք: Այսպէս յառաջադիմութիւն և քաղաքակրթութիւն սպասել Պարսկաստանի համար անհրաւակայիլ է:

Մինչև որ այն բազմութիւն ուժադործ և մոլեռանդ տարրերն խաներն որոնք ծծում են Պարսկաստանի աշխատասէր բնակչաց զուլն ու ծուծը չը զսպվին ապահովութիւն և յառաջադիմութիւն չեն կարող թաղաւորել այդ թշուառ երկրում:

Այս վիճակը լուս հասկանալով Նորին Մեծութիւն Պարսից վեհ. Դահլին ինչպէս հաղորդում է մեր թղթակցիցը հրամայել է Քաւրիլը փոխարքային ձերբակալել և իրատիւ պատժել ուժադործներին և վարձարել վնասվողներին:

Յանցանքն մեր թղթակցի տակ լով աւելի Սայիդ-ուլ-մուլք կոչվող պաշտօնեայի թուլութեանն ու կաշուակրթութեանն է վերաբերելու որ սիրտ և խրախոյս է տուել խաներին գործելու այդ ուժադործութիւնը: Պէտք է յուսալ որ Դահլի կառավարութիւնն, իւր հայրենաց շահը ամեն անձնական շահերից զերազատելով, չի խնայել այդ շարագործ խաների հետ և նոյն խակ Սայիդ-ուլ-մուլքը պաշտօնեային, որ անհաւատարիմ և անհարազատ է գտանվել իւր պարտքին, թէ գուց այդ անձնաւորութիւնը Ալիք կամ հէնց աւելի բարձր ծագումից լինէր: Այս յոյսը տածելով վեհ. Դահլի կառավարութեան արդարասիրութեանն և պարսից օրէնքների խրատութեան վերայ, գողերի աւազակների և ուժադործների վերաբերութեամբ մենք առ այժմ աչքի առաջ ունենալով 200 հայ թշուառ ընտանիքներ, որոնք թափառում են Շուշու փողոցներում կարօտ հացի, զղեստի և բնակարանի, զիմում ենք հայ հասարակութեանց բարեգործ զգացմանց, որ զէթ ժամանակաւոր նպատակ հասցնեն այդ թշուառներին, որ սոքա կարող լինին այս դաժան ձեռն անմիտա անցուցանել մինչև որ շնոր իւր արդարասէր Դահլին ուժադործները կը պատժվին և զրկած կը վերադառնան իրանց հայրենիքն ու կը վերականգնեն իրանց խանարված և քանդված անտեսութիւնը:

Վր յուսանք, որ հայ հասարակու-

Թիւնը միշտ գլխու գլխի թշուառներն այս գէպը մնն էլ չեն զմայալիրանց այդ գովելի և քրիստոնէական լայն յատկութիւնը ցոյց տալու:

Մենք (Մեզու) մէջ մի անգամ խօսեցինք Նոր-Նախիջևանի Հնդկաստանի կարկաթե քաղաքում հանդուցեալ Բաբայան Մասէի կտակած գումարի մասին և ցոյց տուինք, որ Նոր-Նախիջևանի քաղաքային խորհրդարանի իրաւունք չ'ունէր բնաւ կտակեց չեղելու, որ ամեն օրհնագրութեամբ սուրբ է և անայլալիկ: Մեզ այժմ մասնաւորապէս հարգում են, որ այդ գումարի մասին կողմ են գրադրութիւնը և քաղաքային խորհրդարանի որոշումներ:

Մենք այդ ամենը գիտենք և անյայտ չէ մեզ, որ երբ այդ գումարը նշանակել է քաղաքի վարչութիւնը յօդուտ մի զարդի, որ բնաւ յարմար չէ կտակարարի նպատակին և ցանկութեան, անշուշտ արած է այդ խորհրդարանութիւնից և որոշումից յետ: Բայց այդ ամենը զեռ ևս չէ արդարացում գործի անարգարութիւնը: Միթէ չէր կարող քաղաքային վարչութիւնն իւր որոշմանց մէջ սխալ գործել և հակառակ օրէնքի վարվել (այս գէպը մտածելն է օրէնքը) նմանակիցով, ով գիտէ, որպէս կրքերի և ինտրիգաների անձնաւորութեանց կողմից, որոնք ղեկավարներ են իրաւաստներին մտածմանց և կարծիքների: Ես այդպէս քաղաքային խորհրդարաններին մէջ, ուր ձայն ունին շատ անգամ ժողովրդեան չը զարգացած տարրին զանց ընտրած իրաւաստներ, մեծ դեր են խաղում մի քանի ազդեցութիւն ունեցող անձինք, թէ՛ զըբամատէրք քաղաքի մէջ և թէ՛ հանդամանքների ընթացքով անհրաժեշտ դարձած անձնաւորութիւնը, որոնք և

միշտ աղղում են քաղաքային վարչութեան որոշմանց վերայ: Այսպէս քաղաքացիները է անշուշտ և Նոր-Նախիջևանի քաղաքային խորհրդարանի մէջ կայացած որոշումն հանդուցեալ Բաբայան Մասէի կտակած գումարի մասին Բաբայան վարչութեանց անարդար որոշումներն անփոփոխելի չեն Նորա կարող են ամենայն հեշտութեամբ փոխվել, նոյն վարչութեան նոր, աւելի արդար, որոշումով, և նոյն ճանապարհով, ինչպէս յատկացել է կտակած գումարը կրտակին անյարմար նպատակին, նոյն ճանապարհով և միջոցով կարելի է ուղղել սխալն և արդարութիւնը վերականգնել, սրբութեամբ կատարելով կտակը:

Կը յուսանք, որ Նոր-Նախիջևանի հայ հասարակութեան ներկայացուցիչ քաղաքային խորհրդարանը աւելի լաւ կը համարէ, գիտութեամբ թէ անգիտութեամբ գործած սխալը ուղղել և աւելի տրամադիր կ'ընել սրբելու իւր վերայից մի արատ, քան այն թողնելու իւր վերայ: Կարծում ենք, որ նա չի կամենալ իրան պէքան անարի ցոյց տալ, որ երկու կրէ իւր սխալ որոշումն փոխելու:

«Նոր-Գարի» № 186-ում տնտեսութեամբ կարդացինք «Մաթթաբանայի մտնութիւնի ժողով» անվանել վերնագրով անպատկառ գրութիւնը, որ վերաբերում է Ս. Պետերբուրգի հայ ուսանողութեան: Այդ նկարագրած ուսանողութեան ներկայացուցիչ մեզ երեւցաւ ինքն հեղինակն, իւր յօդուածի բովանդակութեամբ և հոգեւոր:

Յատկատեսութիւն և ոգևորութիւն ամեն երիտասարդութեան յատուկ է, միթէ այդ աւելի կարող է լինել արատաւոր մի ամբողջ դասակարգ, որ հասարակութեանց լաւ ապագայի առհասարակ է: Յաւանք է, որ այդպիսի մե-

տակար և խայտառակ գրութեանը մեր մամուլում լոյս են տեսնում:

Մենք յոյս ունինք, որ մեր Ս. Պետերբուրգի հայ ուսանողաց խոնկ գասը այդպիսի գրութեանը, որոնք իրանց մէջ բովանդակում են իրանց պատասխանը, ուշադրութիւն չեն դարձնել իսկ պարտն հեղինակին խորհուրդ կը ասեմք իր խոստացած Правственное разложение и умственное оскудение нинѣшних армянских студентовъ въ С.-Петербургѣ գրութեանը հանդէս չը բերել, միթէ չէ կամենում իւր հոգեկան պատկերն աշխարհիս առաջ դնելու:

Խումբ երիտասարդներին որոնք շատերն արդէն յայտնի են հայ գրականութեան մէջ, թէ՛ «Մեզու» միջոցով իբրև նորա նախկին աշխատակիցներ և թէ՛ իբրև հեղինակներ զանազան գրութեանց յանձնառու են եղած՝ առաջինայ տարուանից մշտապէս աշխատակցելու «Մեզու» ուրով խմբագրութեանս մտաւոր քարոյական ոյժը շատ ստուարնում է:

Այդ պարտատակաւորութիւն յայտնող երիտասարդներին համարուածութիւնը չը շօշուկելու համար, նոցա անունները չենք հրատարակում առայժմ, թողնելով ապագային որ սա յայտնէ նրանց նոցա երկատիրութեանց միջնորդութեամբ:

Բն ի հայր առնուածները, եւ կարնոյ ճանճային եղգնուտը իւր, վտառ առ վտառ, որդիով, ճճիկով, սուղուն ու զեռուներով, կերակրում և մտուցանում է այդքան փետրաւորներին և նրանց ձագուկներին:

Շամբի, թէ բուսական և թէ կենդանական, այդ ճօղութիւնը տեսնելով մարդ, կարծես, այլ ևս չէ կարող տարակուսել այն հակիրճ նկարագրութեան ճշմարտութեանը վրայ, որ մեզանից տասններորդ դար առաջ, կարնոյ շամբի ու նրա լճակի մասին արաւ խորնոյ ծերունին ասելով՝ «անբաւութիւնը ձկանց և դանազան հաւուց ճարակաւորաց, յորոց է շոտոյ մշտն կրտսէր լիւնիս Բոնիսէն» (իւր զեզերը մօրին շամբը և բաղմութիւն եղեկանոց և դաշտքն ունին զթանձրութիւն խոտոց և զքաջարեութիւն սեր մասնաւոր պողոց):

Կարնոյ շամբը, առանձին ինն կերպիւր, գրաւիչ է եւրօպայի գիտնականների համար մասնաւոր: Գրանք այնտեղ թէ աւատութեամբ թռչնորութիւն են անում և թէ իրանց կենդանաբանական հաւաքածոները հարստացնում:

Սակայն յուլիս ամսից սկսեալ, երբ սկսվում են ամառային շոգերը մինչև 22—24 աստիճան շ), կարնոյ շամբը իւր բուսական զգեստը մերկանում է: Գետնի միջի վերջին խոնաւութիւնը խալտու գոլորչանում է և, այնուհետև, շամբի մակերեսով ճեղքուտուելով՝ մեծ ու փոքր և կոշտ ու բլուրտ փոսեր ու խոտոյներ է կազմում:

Նօտարածութեան իմաստը ծայրահեղ չարագանցութիւն է համարում Տէյլոր Քրանտիլի: Մի այլ ճանապարհորդ և անգլիացի հիւպատոսը հակամէտ են խորնացու գրածը ճշգրտութեանը ընդունել:

Յեղիտի ջերմաչափով:

ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թ Ա Ի Բ Ի Զ
3 նոյեմբերի.

(Թղթակցութիւն «Մեզու» Հայաստանի լրագրի)

«Մեզու» լրագրի խմբագրութեան.

ՄԻ ՔՍՏՄԵՆԵԼԻ ԵՂԵՌԱՅԱՌՄՈՒԹԻՒՆ.

Ինն ամբողջ հայ գիտն ու արդարապէս կանխ նահանգում Ղարաբաղ կոչուած գաւառում հիմնովին բար աւազակ են եղել պարսիկ խաների ձեռքով երկու հարիւր տուն թշուառ բնակիչները կողպուտել իրենց ամբողջ զոյքից նոցա կանայքը և աղջկերքը լիւրենը բռնաբարուել են զազանարար աւազակներ ձեռքով և երբ մի հերոս հայ յուհի մի հերոս հայ օրիորդ իր կուսական պատիւը պաշտպանելու համար ընդդիմադրութիւն է գործել անխնայաբար մոլորկին պարսիկ սրին զոհ է գնացել երբ յիջ կանայք վիժել են իրենց արգանդի պտուղը կամ մի և նոյն արգանդը հերձուելով անմեղ մանկիկը սրով խողտուել է:

Եղբուրդիւն այսպէս է:

Ղարաբաղի Փէյվան կոչուած գաւառակի 9 հայ գիւղեր առաջ զըտանվում են եղի ջեղեպեան կոչուած խաների իշխանութեան ներքոյ: Այդ

բունակալ և Եօզրէկի (ինքնազուլս) խաները շարունակ հարստահարում են եղել խեղճ բնակիչներին որոնք երկու-գեց անուանեց Տամբերում են եղել: Վերջապէս պարսից Տահի կաւաւարու թիւնը իմանալով այդ բանը և կամենալով թշուառների քաշած զեկանաց վերջ գնել խլում է այդ ինն գիւղը խաների ձեռքից և յանձնում է այդ գիւղերի կաւաւարութիւնը Թաւրիզու արտաքին գործոց նախարարութեան պաշտօնայ Սախուլ-Մուսուլլին, որն իր կողմից մի առանձին մեքալեր (զիւաւոր) կարգելով նորա ձեռքով ժողովում էր շարունակ մի քանի տարի արքունի հարկը և ամեն տարի ևս բայի հարկից մի որոշ գումար առնում էր բռնակիչներից յօդուտ իր զրպանի: Երանակիչները մեծաւ ուրախութեամբ վճարում էին ըստ որում իրենց այժմեան վիճակը անհամեմատաբար աւաջուանից լաւ էր:

Խաները հարկաւ զայրացած այդ բանից միշտ աւելի էին որոնում վրէժխնդիր լինել և օրովհետեւ կաւաւարութեան հետ պատերազմել էին կարող ուստի անշուշտ իրենց բոլոր բարկութիւնը պէտք է թափէին խեղճ բնակիչներին զիւրին:

Պէտք է այս ևս ասենք, որ Սախուլ-Մուսուլլէ կոչուած պաշտօնային մի թոյլ և հեշտութեամբ գրաւվող անհն էր նա անձնապէս սիրող չէ բըբրաւորներին մանուաւոր որ ինքըն էլ օչնոք կոչուած կրօնական կարգիցն է: Նորա այդ անհոգութիւնից և թուլութիւնից օգուտ քարե-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Գ Ի Ն Ե Դ Ե Ի

(ՉՈՐՍ ՕՐՈՒՄ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

ՕՐ ԵՐՐՈՐԳ.—ՄԱՍՆ ԵՐՐՈՐԳ *

ԿԵ.

Երբորումի հիւսիսային կողմը — երբորդ օրը սկսեց ծերունիներ էլ իւր պատմութիւնը — տարածում է կարնոյ շամբը կամ մօրը, որին տեղացիք Սաղ կամ Սաղըլ անունն են տալիս:

Սաղը 4 1/2 վերստ լայնութեամբ և 15 վերստ երկայնութեամբ մի քրայնից տարածութիւն է, ուր կայ և մի լճակ Լըճակ մեր պատմութեան մէջ կարնոյ ծովակ կոչուածն է, Նա 5735 ոտնաչափ բարձր է ծովի մակերեսից: Եւ ունի մէկ վերստ երկայնութիւն ու 400 սա-

*) «Գիտնական» երբորդ, ամենամեծ մասամբ, և չորրորդ, մասերի գործողութիւնը ճանկահայտատանումն են կատարվում: Պարտականութիւն են համարում յայտնել, որ եւ, զբարդարար, յիշեալ երկիրը տեսնելու աւելի ունեցած չեմ: Միայն գրականութեան զէմ, բաց է ի բաց, մեղանշած չը լինելու համար, որքան ձեռնհաս էի, կարողացել եմ այն ամեն, ինչ և նոր, հայազգի և օտարազգի պատմադիրների և ճանապարհորդների գրութեանը, որոց մէջ ինձ հարկաւոր տեղեկութիւնք կային (կարնոյ շամբի և նրա լճակի կախերն կտրկատանն շտապի ամենակրթին, 5 վերստանոց, քարաէլի մայրաբնիցն եմ վերցրել): Բայց հասանական է, որ գրութեանը մէջ գարձեալ սխալներ լինին, որոց համար ընթերցողներին ներողամտութեամբ աղակնելուց և անաշտ քննադատութեամբ սպասելուց զատ, ուրիշ ոչ մի հնար չունիմ,

Հեղինակ.

Ժեն լայնութիւն:

Գարնան սկզբներում տեղացող անձրևները, (մեծ մասամբ արևը մայր մըտնելուց յետոյ) նոյնպէս և կարնոյ քարածրաւանակը չըբայատող լճանից հաւուց մեծաքանակ ձիւնը, մի քանի և օթնեկուտ, հաւաքուելով շամբի մէջ նրան, թէ և միտնակ, սակայն առատ բուսականութիւն են մատակարարում:

Այդ ժամանակ Սաղը, զրեթէ ամբողջապէս, եղեգնայ խիտ անտառ է ձեւանում, ուր լի է նմանապէս, և խոտը, այն ևս մինչև մարդու մէջը:

Շրջակայքի բնակիչները, մեծ քանակութեամբ, կտրատելով և հնձելով շամբի եղեգն ու խոտը նրանց չորութիւնն ու մտաները, իբրև վառելիք, գործածում են թոփոխներում, մինչև անգամ, բաղնիսներում: Շինում են, նմանապէս, չուի, փոքրիկ ծխաւորներ — մուշտուկ: Պատրաստում են ճիւղեր, բալթիք, փրփր խաթ, կեմ, բեռնակիր կենդանաց համեսները բարձ և մանկանց օրօրոցի խոտիւր — անկողին: Շամբի մնացեալ խոտը, տեղն ու տեղը, արածում են չորքտանիք:

Ողջ գարունն ու ամառը կարնոյ շամբում բազմատեսակ և բազմաթիւ թռչուններ են վիտում: Ինչպէս, օրինակ, կարասոյ, որոյ մի առանձին, և մեծ, անսակը կոչվում է արօս: Զինկուլ, սազ, լազ, ճայ, աքլոր, կաբա, փափան, մեծամեծ ազանիք, տաբակի, սև ու սպիտակ արաղիլ, հային շատ սիրելի խաբարբերիկ կուտիլը, բայմազան ճնճուկներ, տարմաշա, գեանազուա, լազէ, գեանաթիւ, անդր, կարտարեկ, արքար, սալարեկ, հաւալուտն կար ջրլտթան, սրոր, չորսր, լուղիկ, կարմրագոյն սարեակ, — մի խօսքով՝ թանցող աւելի քան 200 տեսակը, զէթ մինչ օ-

հոգայ և թէ գծնդակ ձմաւոր, որ այս կողմերում եօթ ութ ամիս է տեսում, իւր և իւր բազմաթիւ, լճիկն ու կիճն, կենդանաց կեանքը պահպովէ: Եւ կապահովէ: Հոկտեմբերից մինչև Ապրիլ 3—4 ոտնաչափ թանձրութեամբ ձիւնը թէ և պատել է կարնոյ քարածրաւանակը: Իրաւորներին հողմերն ու հողմայրերը երկրագործ մարդուն իւր գետնափոր բնակարանում պատել պաշարել են թէ և, բայց նա կուշտ է դարձեալ: Օրհնակ երկիրը նրա ցանքսին մէկին 16 պտուղ է տուել ամառը:

ԿԵ.

Արևը կամաց կամաց դեպի մայրն էր թեքվում: Նրա ոսկեփայլ ճառագայթները թաւում էին մէկ այս լուսն կողքին, մէկ այն լուսն գաղաթիւն և ոսկեգոծում այնտեղ գտնուած երկնաբան ժողովները, կանանչ խոտերն ու լրկի ապաւածները:

Այդ ժամանակ մի առանձին կենդանութիւն էր նկատվում կարնոյ շամբի մէջ և նրան չըբայատող երկնակամարի վրայ: Խօսքը շամբի փետրաւոր բնակաց մասին է: Գրանցից ունեք արդէն բոյներում նստած՝ իրանց ճուղիւններով ձագուկներին հետ, կարծես, խօսք ու զրից էին անում: Այդ խայտալով ճախում էին օդի մէջ, հէնց լուսնա նախքան գէճ եղեգնուտի մէջ զօղվը, ուղան էին կուշտ թալով օդ ծծել: Ունեք անդադար շամբի մէկ կողմից դեպի միւսն էին սլանում և շուտ շուտ իրանց երկայն կտուցները բեռնաւորում: Իրանց փոքրիկների համար զգաւ իրկցանցի պատրաստութիւն էին տեսնում: Միւսները օդի բարձր գաւառներում ուր մտր պտոյտներ էին անում, կարծես, ուշացող ընկերների գալտեանը սպասում:

